

ուս Արժանապատիւ Արիստակէս Ասրղապատի
 Յաջորդի տեղոյս առ այդ թմախճազին խնդրանօք,
 երբ լուսմ է Յաջորդն՝ արծարծում է իւր մէջ
 ազգասիրական հագին, խակցն կ'զրէ իւր կողմանէ
 տեղոյն դաւառապատի վերայ փութմանակի կա-
 սանօք յղիլ մոլորուածը, զկնի գրութեան Արժ.
 Յաջորդին ջանցած երկու ամիս՝ պահասանօք
 եկած հասաւ նորահասա Վաստարը տեղոյս Յա-
 ջորդարանն, ընդ որս Արժ. Յաջորդն զիշեր և ցե-
 բիկ քարոզութեամբ և քրիստոնէական վարդա-
 պետութեամբ զանազան համոզողական խրատնե-
 րով սկսեց փարատել սորա մոլորութիւններն՝
 բացատրելով ընդ նմին մի ըստ միօջէ քրիստոնէ-
 ական հաւատոյ մասունքներն՝ և նոցա նշանակու-
 թիւնները, հազիւ հազ թէ կարողացաւ կրկին
 քրիստոնէական հաւատոյ հպատակ կացուցանել,
 տանելով ընդ իւր ի միասին եկեղեցին, մինչև այն
 ատիճանն հասաւ աշխատութիւնն Արժ. Յաջոր-
 դին՝ որ կարողացաւ հաստատել կատարելագոյն
 քրիստոնէական կրօնքի միջ. յետ որոյ անելով
 բացատրութիւն, տեղոյս Հոգևոր Առաջադրու-
 թեան ատենի մէջ ներկայութեամբ անգամոց, թէ
 այլ ևս չըմտասահանալ նոյն օրինակ անկարգու-
 թիւնների և մոլորութիւնների ձեռնամուխ լինելոյ
 և այլն

Արեմն խնդրեմ Աշուրիցը տպագրութեան
 տեղի ունենալ այս իմ առաջնանուէր մտաց ար-
 գասիքը իւր պատուական Անազրի թերթերու
 մէջ ի իրախոյս ո՛չ միայն ինձ՝ այլ և բոլոր ու-
 սումնասանչ երեսասարքաց Յաջորդութեանս նու-
 խոյս:

Առաջ Թ. Ստեփանեան Բողոքանէանց.
 է 18 Հոկտեմբերի 1870 -ի
 է ք. Ն. - Է.:

Խօսքաւորութեան Արարար ամսագրոյ.

Յետագայ ազգօգուտ ուրախակի ձեռնարկութիւն
 Վորոց Հայ հասարակութեան համար ոչ սակաւ
 ուրախութեան առիթ եղաւ Վորոց քաղաքացի-
 ներէն Աստուարժան անձինք Վրիգոր Վուլչաձ-
 բարեանց, Վրիգոր Վալթեանց և Նստի Ամիրա-

ղեանց ի վաղուց հետէ նկատողութեան տակը ու-
 նենալով իրենց համաքաղաքացի Հայկազուն օրի-
 որդաց բարոյական թշուառութիւնը, և նոցա ի-
 բնեց մայրնի լեզուէն և ուսմանէն զերկվելոյ մտա-
 զիր եղնն այսպիսի սարսաղութեան առաջն առ-
 նուլ, և օրիորդական վարժարան մը բանալ Վորի
 քաղաքի մէջ, որոյ ներքին և արտաքին գրութիւ-
 նը ապահովել իրենց սեպհական ծախսով, մինչև
 որ կարողանան ուսումնարանը կառավարելու հա-
 մար արդեանց աղբիւր մը գտնել և բարերարաց
 ստորագրութիւնները բազմացնել: Բայց վերջիշեալ
 Ազգասէր անձինք թէ և հին ուսումնարանի դահ-
 լիճները արդէն վերանորոգած էին, որ կ'գտնվի
 սուրբ Աստուածածին մայր եկեղեցւոյ գաւթի մէջ,
 և վարժարանի վերաբերեալ ամեն հարկաւոր պի-
 տոյք նախապատրաստած էին, բայց զեռ ևս իրենց
 ներկայ նպատակը անկատար թողնելով՝ նախ և
 առաջ առանձին խնդրագրոյ հետ մատուցանելով
 Ա. և Հափառ Ասթուղիկոսին վարժարանի կարգա-
 գրութեանց ցուցակը, և յայտնելով իրենց այսպի-
 սի ուրախախիթ ձեռնարկութիւնը՝ խնդրեալ էին
 նորին Ա. և Հափառութեանէն հաստատել զիրենք
 նոյն վարժարանի Հոգարարձական պաշտօնի մէջ,
 և շնորհել իրենց ուսումնարանի բացման իրաւուն-
 քը: Ա. և Հափառ Հայրապետն ևս պատուելով նո-
 ցա այս բարենախանձ նպատակը՝ հանդերձ իւր
 Հայրական օրհնութեամբ բարեհաճեալ էր հաս-
 տատել նորանց նոյն պաշտօնի մէջ, և իւր պա-
 տուական կոնդակաւ իրաւունք շնորհել յառաջ
 վարել իրենց այսպիսի ազգասիրական եռանդ և
 ջանացողութիւնը: Աստի յիշեալ նորահաստատ
 Հոգարարձութիւն Աստուածարեալ Ա. և Հափառ
 Հօր օրհնութեանէն և ներկայ թողտուութեանէն խը-
 բախուալիցով՝ օրով առաջ հրաւիրագիրներով հը-
 բախիբալ էր Վորոց և նորա վիճակի քահանայ-
 քը և տկանաւոր անձինքը նոյն վարժարանի բաց-
 ման և օրհնութեան հանդիսին մէջ ներկայ լինե-
 լու, որ կատարվելու էր Հոկտեմբեր ամսոյս Կ ին
 սուրբ Աստուածածին Աւագ եկեղեցւոյ գաւթում
 սուրբ պատարագը աւարտելէն զի՛նի. ուստի իմա-
 նալով ներկայ շղեղ հանդիսակատարութեան սահ-
 մանեալ ժամանակը՝ ամենքն էլ խուռն բազմու-
 թեամբ զիմեցին նախ՝ զեպի եկեղեցի սուրբ պա-

